



ՀԱՅԲԱՐԱՅԻՆ

ԵՐԱՅԻՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 162

29 ՕԴՈՍՏՈՍ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՅՕՆԱՑՈՅՑ

Օգոստ.	30	†	Կիր.	գձ.	Բ. զկնի վերափոխման :
	31		Բշ.	զկ.	Ս. Նրեմիա մարգարէին: Եւ Ս. Մարգարէիցն Եզեկիի, Եզրի, Զաքարիայ՝ հօրն Յովհաննու Մկրտչի: Եւ Ս. Յովհաննու Կարապետին եւ Յոբայ արդարոյն:
Սեպտ.	1		Գշ.	դձ.	Ս. Անդրէի զօրավարին եւ բանակի նորին եւ Կալինիկոսի վկային եւ Դիոմիդեայ բժշկին: Եւ Ս. Ադրիանոսի եւ կնոջ նորա Անատոլեայ եւ Թեոդորոսի Ստրասելասի եւ Թիւրոսի վկային:
	2		Դշ.	դկ.	Պահոց:
	3		Եշ.	ւձ.	Սրբոց Քարգմանչացն Մեսրոբայ վարդապետին եւ Նղիբէի, Մովսէսի քերթողի եւ Դաւթի անյաղբ փիլիսոփայի, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Լամբրոնացւոյն:
	4		Ուր.	ակ.	Պահոց:
	5		Շք.	քձ.	Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հարիւր ութնասն հայրապետացն:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Յ

ԽԱՉԻԿ Վ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Տպ. «Կ. Արձագանգ»ի: Գիճն՝ 3 դանկերան:

Կը վաճառուի Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կալաթա, Սեղբոս խան Մխիթարեանց գրատունը:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹԱԵՐԹ

Զորոյի տարի Թ 29 Օգոստոս 1914 Թիւ 162

ՀԱՆԳԻՍՏ

ՊԻՈՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ Ժ.Ի

Այն սոսկալի պահուն՝ մինչ պատերազմի արեւնուշտ ողին զազանա-
ցած կը դղրդէ և արեան ճապաղիքներով կ'ողողէ բովանդակ եւրոպական
սահմանները, մթնոլորտը սարսուացնող դժոխային մեքենաներու ահարկու
բոմբիւններուն մէջ ողբանուագ գոյժ մը անակնկալ տրտմութեամբ համա-
կեց տիեզերքը, սուգերու մէջ թաղեց կաթողիկէ աշխարհը։ Կարճատեւ հի-
ւանդութիւն մը խլեց տարաւ գերազնիւ և թանկագին կեանք մը, Քրիս-
տոսի համար հասունցած պառօղի մը պէս։ Ոչ եւս է Վատիկանու ալեղարդ,
պատկառելի, սրբակեաց Ծերունին։ Հանգեա՛ւ ի Քրիստոս մեր գուրգու-
րալից հայրը, Ս. Եկեղեցւոյ տեսանելի Գլուխը, անսխալ Վարդապետը, Ս.
Պետրոսի փառազարդ Յաջորդը, Աստուածորդւոյն երկրի վրայ Փոխանորդը,
այրիացած և տրտմաթախիծ թողլով Քահանայապետական Աթոռը։ Անոր
հոգին, արհամարհելով այլեւս այս թշուառ աշխարհը, ազունենման թռա-
յերկինս՝ երանելեաց գաւառը, յանվերջ համբոյր անմահ թաղաւորին։

Մեռա՛ւ ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ Ժ.։ Չկայ ճշմարտապէս կաթողիկէ սիրտ
մը, որ չխռովի, չխոցուի կարեւրէր այս մեծ կորստեան համար։ Քանզի չկայ
ճշմարիտ կաթողիկէ մը, որ իբրեւ զաւակ սիրած չըլլայ այս անուշիկ հայրը։

Սակայն քրիստոնէին տրտմութիւնը խառն է երկնաւոր մխիթարութեամբ, նոյն իսկ ուրախութեամբ: Ո՛չ, ո՛չ. կորուստ չէ մահը, մանաւանդ թէ սպասուած պայմանաժամն է անկերջ վարձատրութեան. «Մառա՛յ քարի եւ հաւասարիս, մո՛ւս յուրախութիւն Տեսուն Բո՛»:

ՊԻՈՍ Ժ.ի մահը՝ ամենէն նախաձեռնի մահն է. քանզի ճշմարիտ սուրբի մը մահն է: Այս ութնամեայ կեանքը՝ ակաղձուն է բարի գործերով, որոնք իրեն ընկերացան իբրեւ բարի ռահվիրաներ, առաջնորդ հրեշտակներ: Անմեղ, անարատ, շուշանափայլ կեանք մը՝ լի սրբութեամբ. անսասան հաւատքով, աներկեւան յուսով, արծարծուն սիրով անթարչամարար բողբոջած կեանք մը. միշտ պարտաճանաչ, միշտ զոհուած, միշտ աշխատող, աղօթասէր, միշտ հեղ, քաղցրաբարոյ և խոնարհ, բայց միանգամայն վեհ և պատկառելի. միշտ մահացուած, անպճնասէր, սակաւապէտ կեանք մը: Ահա ինչ որ մատոյց իր Արարչին, համակամ յօժարութեամբ, իր տիեզերական հօտին մեծագին ժառանգութիւն թողլով իր սրբակեայ կեանքին օրինակները. «որոնք իշխանութեան բարձունքներուն վրայ փայլեցան իբրեւ քաղաք լերան վրայ շինուած: Հոգւոյն Սրբոյ շնորհներն ու պարգեւները առատազեղ փարթամացուցած էին այն ընտրեալ հոգին, որուն չպակսեցաւ մինչեւ իսկ հրահրաշագործութեան արտակարգ շնորհը: Իր զաւակները հաստատապէս կը յուսան որ օր մը Ս. Եկեղեցին այս սրբանշնչի Հայրապետը պիտի զետեղէ խորաններու վրայ, երկնաւոր Պաշտպան Ս. Եկեղեցւոյ և իր հօտին, որուն համար զոհեց իր երկրաւոր կեանքը:

Այո՛, ՊԻՈՍ Ժ. իր կեանքը բոլորանուէր պատարագեց ի փառս Աստուծոյ, և յօգուտ Ս. Եկեղեցւոյ և իր հօտին: Իր կենսագրութիւնը, զոր՝ ստիպուած, ուրիշ առթի կը թողունք, սուրբ եկեղեցականի մը վարքն է. իր երիտասարդութիւնը, իր քահանայութիւնը, մանաւանդ իր եպիսկոպոսական տարիներուն չըջանը, լի է մեծամեծ և անսովոր առաքինութեան գործերով:

Այլ մանաւանդ իր Քահանայապետութիւնը բացարձակապէս նախախնամական եղաւ Եկեղեցւոյ համար: Պահ մը վարանեցաւ ամբողջ տիեզերք, երբ աւելի քան իննսնամեայ Լեւոն ԺԳ. մեծափառ Քահանայապետը փոխուեցաւ յաստեացս. ո՞վ պիտի կարենար արժանապէս յաջորդել այն անմահ Քահանայապետին: . . .

Մարդոց թերի հաշիւներուն վրայ կը ծիծաղի Աստուած:

Աստուած ընտրեց մէկը՝ որուն վրայ մարդիկ ամենէն քիչ կը խորհէին կամ ամենեւին իսկ ոչ:

Աստուած ընտրեց Սարկոյ Կարգինայը, ՊԻՈՍ Ժ.ը, որ՝ յաջորդութեանը յիրաւի արժանաւորութեամբը յապուշ կրթեց բանիմաց և քրիստոնեայ աշ-

խարհը՝ որ չի տարուիր աշխարհիս կեղծ փայլերէն, նորեղուկ հոսանքներէն. որ գեռ յոյս մը ունի Եկեղեցւոյ անսասանութեան և յաւերժական տեւողութեան վրայ, ինչպէս խոստացաւ Որդին Աստուած:

Տասներկու տարի առաջ երբ ՊԻՈՍ Ժ. բազմեցաւ Ս. Պետրոսի Աւաքերայետի Աթոռին վրայ, երկու նշանաբաններ իրենց ձգեցին ընդհանուրին աչքերը.

“Հուր քորթուեալ”

“Զամենայն նորոգել ի Քրիստոս”:

Նախագուշակ մարգարէական առած մը եղած էր թէ նորընտիր Քահանայապետը պիտի ըլլար վառ բորբոք հուր մը: Եւ ահա տասներկու տարիներէ ի վեր սրպիսի՝ ճառագայթարձակ փայլեր չողացուց Ս. Եկեղեցւոյ մէջ, ամբողջ աշխարհի վրայ, իր գերիմաստ վարդապետութեամբը, որպիսի՝ հոգեւոր ջերմութիւն, կրակուրոյ սէր և եռանդ. կաթողիկէ կենաց որպիսի՝ կայծեր ու հրատներ չվառեցան, չարծարծեցան առաքելական շունչովը ՊԻՈՍ Ժ.ի, որ կենդրոնական արեւ մըն էր եղած Ս. Եկեղեցւոյ սրտին մէջ իսկ: Այս տարութիւնը հալեցուց դարուս ցրտութիւնը որ հոգւոյ վրայ կ'իշխէր. հաւատք ու եռանդ բոցավառեցան, և տեղի տուաւ գաղջութեան, անտարբերութեան, տարակոյսի և եսականութեան սառնամանիքը. և երակներու մէջ սկսաւ նորարծարծ շրջան ընել կաթողիկէ արիւնը. Աստուծոյ ձեռքին տակ փառեցաւ այդ բոցը:

Սառցուեցաւ նոյնպէս իր երեւելի նշանաբանը, Ամէն բան նորոգելու ի Քրիստոս: Մեծադժոժը քայքայուող աշխարհի, կործանուող մտքի, բարոյականի ու հաւատքի առջեւ, իրմով Կաթողիկէ Եկեղեցին յայտնուեցաւ իբրեւ գերադոյն և անդրդուելի ապաստանարան. Ընկերական ամենամեծ հարցը, ամենափայլուն լուծում գտաւ այս մեծ Քահանայապետէն:

Սակայն Եկեղեցւոյ մէջ իսկ թշնամոյն որոմը սպրդած էր և կը ճգնէր բարի սերմը խեղդել. զաշխարհ ապականող ամբարտաւանութեան և հետտութեան մթնոլորտը՝ սրբավայրին մէջ ալ սկսած էր թափանցել: Իրաւ է որ աստուածային խոստումով անարատ եւ անաղարտ պիտի մնայ միշտ Կաթողիկէ հաւատքը, բարոյականը և Նուիրապետութիւնը, բայց հօտին մէջ, մինչեւ իսկ երբեմն հովիւներուն մէջ կը նշմարուին նուաղումներ, թալուկներ, չեղումներ. Եկեղեցւոյ և մարդկութեան համար չարագոյն աղէտն է այդ:

ՊԻՈՍ Ժ. արծուային ակնարկով մը տեսաւ այդ վտանգը. գերբնական որոշումով մը վճռեց արմատաքի խլել այդ որոմը, և ամէն բարձրութիւնը գերել ի հնազանդութիւն Քրիստոսի: Իր ամբողջ Քահանայապետութիւնը հանճարի կամ լաւ եւս՝ սրբութեան այս ըմբռնումին մէջ բովանդակուած է:

Եկամուտ թերութիւններէն մաքրեց վարդապետութիւնը. մոլորութիւնները անխնայ յօտեց իբրեւ մշակ Քրիստոսի. և նոր առուգութեամբ ուռճացուց սրբազան Որթին ուռերը: Աննկուն նախանձախնդրութեամբ Արդիականութեան բազմագլխեան վիշապը խեղդեց իր դժոխային յաւակնութեանց մէջ: Ամուր ձեռքով և յարատեւ ուշադրութեամբ վերահաստատեց թուլցած Բարեկարգութիւնը, վերանորոգեց սրբազան Իրաւունքը և անշարժ հիմերու վրայ վերականգնեց Եկեղեցւոյ վարչութիւնը: Մեզի՝ Հայոցս իսկ, որոնց միշտ հայրական սէր մը տածեց և միշտ բարերարեց, մեզի ալ ազդեցիկ կերպով խնամ տարաւ, մնայուն բարեկարգութեամբ Իրմէն հաստատուած Սինոդով մը օժտելով մեր եկեղեցին: — Աստուածաբանութեան մանաւանդ՝ Ս. Թովմասի, Հրեշտակային Վարդապետին և Ս. Գրոց բարձր ուսմունքները նշուիրական և պարտաւորիչ ըրաւ, կազմ և կուռ մարտիկներ պատրաստելու համար հեղեղող մոլորութեանց դէմ: Անդիմադրելի մղումով մը հաւատացեալները յառաջ վարեց հաւատոյ, սիրոյ և եռանդեան ակնաղբիւրին, ներշնչուած և անտեղիտայի պնդումներով մղեց տարաւ բարեպաշտութեան, ուժոյ և միտքարութեան յաղթապանծ Արքային, Ս. Հաղորդութեան Խորհրդոյն: Եւ որպիսի՝ ազնիւ խորհուրդներով, ո՛րչափ յարատեւ յորդորներով և մանրամասնութիւններով Սիրոյ Թագաւորին բանակներ զրկեց, բանակներ ծերերու, երիտասարդներու և մանաւանդ անմեղ մանուկներու. «Ո՛վ եմ տփա, որ իբրեւ զաւաղնիս ձագախաւուն երաւոյնիս զան տա իս»... այնչափ որ ի կենդանութեան իսկ արժանացաւ յոյժ նախանձելի և անհամեմատ քաղցր տիտղոսի Ս. Հաղորդութեան Քահանայապետը՝

Եւ ինքը, թէեւ Քահանայապետ, այսու հանդերձ իբրեւ աւետարանական անկեղծ մանուկ մը, ամէն օր գետնատարած շնորհները կը հայցէր երկնաւոր Քահանայապետին, միւս ձեռքովը առատաձեռն բաշխելու համար կարօտ մարդկութեան մինչեւ ցծագա երկրի. միջնորդ կենալով Աստուծոյ եւ մեղաւորաց միջեւ, անարատ Պատարագոյն Գողգոթայի, քան Մովսէս և Ահարոն ազնուագոյն եւ հզօրագոյն: Առարկայ եղաւ անվերջ և որդիական մեծաբանաց՝ Թագակիր գլուխներու, հազարաւոր եպիսկոպոսներու, բիւրաւոր միլիոնաւոր կաթողիկէներու, հիացող ամբողջ աշխարհի ...

Եւ ահա անուշահոտ խունկի մը պէս բուրեց Անմահին Ս. Սեղանին վրայ և հրեշտակներ ժողովեցին իր վերջին շունչը, վերջին շունչը Վատիկանի ալեղարդ բանտարկեալին, որ այս ահաւոր պատերազմին սարսափներէն եւ խուժուժ արիւնահեղումներէն կարեւելլ խոցուած, կարապի ձայն մը արձակեց՝ յորդորելով աշխարհի հաւատացեալները՝ այնչափ եռանդով ու շատ ազօթելու, մինչեւ իսկ յոգնեցնել զԱստուած եւ շնորհ ընդունիլ որ ազգաց

վարիչները աւելի խաղաղութեան վրայ մտածեն քան պատերազմի։ Ս. Պապը պատերազմին զոհն է, ըսին Հռոմի նոյն իսկ հակակաթողիկեայ թերթերը։ «Այս վերջին օրերս անհամար հեռագիրներ զարնել տուաւ եւրոպական պատերազմի մը արհաւիրքներէն ազատելու համար։ Այս մասին ունեցած յոգնութիւնը՝ սպառեց անոր մնացած վերջին ուժերը։ Վատիկանէն անձնաւորութիւն մը յայտարարած է թէ պատերազմին Ս. Քահանայապետին պատճառած վիշտը իր հիւանդութեան առաջին պատճառներէն մին եղաւ։ Ս. Պապը կ'ըսէր. — «Ո՛րքան միասին մեծցած քահանաներ, որոնք տակաւին երէկ Հռոմի մէջ միասին կ'ապրէին, պարտաւորուեցան մեկնիլ եւ իրենց պատկանեալ բանակներու շարքերուն մէջ մտնել իբր թշնամի իրարու դէմ կըռուելու համար»։ — «Որպէս Քահանայապետ եւ Կաթողիկէ սիրտս կը սարսուռայ» կ'ըսէր, եւ աչքերը արտասուքով կը լեցուէին»։

Այսպէս ի խոր խոցուած այդ հայրապետական ազնիւ կուրծքը, խաչակցեցաւ Քրիստոսի եւ խմբց լեղին, եւ այդ վերջին հայրական աղաղակը թնդացնելով աշխարհի վրայ, սրտի կեղեքումներու եւ տագնապներու մէջ, ցաւի եւ մանաւանդ ցաւակցութեան Գողգոթային վրայ աւանդեց իր սրբանեալ հոգին, եւ թռաւ յերկինս՝ հոն թաղաւորելու համար ի մշտնջենաւորս, ուր Որդին Մարդոյ կը նստի ընդ աջմէ Աստուծոյ։

Սրբեհը ուրեմն մեր դառն արտասուքը։

ՀԻՆ ԱՄԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱՆԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՑ ԻՒՇՄ

(1827 — 1830)

Ճուռմաս կիւն 9. — Փաշա քարոստունտան Հալէպլիէր իշխն տահի պէօլէ պիր հապէր չըգտը. ծնւար տահի բում քիլիսէսինէ կիտիպ բում փաթրիինէ իթաաթ էտսինլէր վէ քէնտիլէրէ 3 կիւն մէօլէթ վէրիլտի քի, տիւշիւնիւպ պունուն հապէրինի վէրիլտի։

Մալը կիւն 13. — Իւշ կիւն թէքիլ օլտոռքտա՝ Թէթուլլահ չէլէպի բում փաթրիինէ կիտիպ պէօլէ սլօլէյօր. Մալըմըզ ըրզըմըզ փատիշահըն տըր. ամա ճանրմըզ Ուլա-

հըն, փաթրիք տէյօր. Այ օղուլ, պանա սէօլէմէ, վար քափուլա աղնաթ, պէն տէյիլիմ պու շէլլէրի սիլէ իտէն, Վաքաա տէյիլ իտի. էկէր էրմէնի փաթրիի կիպի զուլում իթմէք իսթէմիշ օլսայար, իտէպիլիթտի. հաթթա պիր գաշ տէֆա էրմէնի փաթրիի բում փաթրիինէ հապէր կէօնտէրիյօր. Վաքըթ չիմտի տիր, սէն տէ այաղա քալք, շունլարըն հազզընտան կէլ. պէն նիճէ իտիյօրսամ, Լաքին օ տիյնէմէտի, Պունուն իւզէրինէ էրմէնի վարար քարու թարաֆընը ֆիթլէտի տէմէ իլէ. Հալէպլիէր տահի ֆըրէնիկ քիլիսէսինէ կիտէրլէր, լազըմ քի բում քիլիսէսինէ վարմալը աըրլար. պու սէօլէն իւսթիւնէ հապէր կիթտի բում փաթրիինէ, 3 էթուլլահ չէլէպի կիթտի բէիա էֆէնտիյէ, վէ նիճէ բում փաթրիինէ իլէրի տէմիշ իտի իտէօնա տա էօլէ սլօլէտի վէ աղնաթար. էֆէնտիմ պիզ բում քիլիսէսինէ վարըպ ծուլարա թապի օլմայըլ, զիլա վաֆթիզիմիլ,

նիքեահրմըզ վի էօլիւմիւզ թուամ պաղլը տէ-
յիւ, իլլա փափազըմըզ իտէր. պիզ էրմէնի
քաթօլիք կիպի տէյիլիզ. սնլարըն հէր շէյլէ-
րինի էրմէնիլէր իտէրլէր. իշթէ պունա քը-
յաս թիւրիւ սէօզլէր տէտի պիթիւրտի:

Պու արատա էրմէնի փաթրիի պաքտը
կէօրտիւ 3 կիւն օլտու ֆէրման իլէ խաթտը
շէրիֆ օքունալը տա՝ հիշ պիր շէյ աղնայա-
մասը. եանի քէնտի նէ՝ զանն իտէր իտի,
ֆէրմանը օքունալ իլէ կէօզ տաղը վէրաիին-
տէ, հէփ քաթօլիքլէր սահաթընտա քէնտինէ
միւթիւ օլաճաքլարտը. պու օլմալընճա՝ չա-
ղըրտը 4 էանաֆտան եանի քույումճուտան,
սիմքէշտէն, սահաթճրտան վէ քազազտան 4
քիշի Փաթրիքհանէյէ վէ պաշլատը աղնաթ-
մաղա ֆէրմանըն մէֆիւմուկու գիյատէ գօր-
քու կէօթէրէրէք, նիճէ էօլիւմ օլուր կիպի
վէ սիւրիւլաիւքլէրի եէրտէն չօլուք չօճուք-
լարը ալըրլըպ պիրպիրինտէն տաղըլաճաք վէ
էվլատլարըմըզ միւսլիւման էլինէ կէշինճէ,
պունտան նահատակութիւն մը չըքար պու
շէյին օլաճաղը նէ՝ տիր պիլիւրմիսինիզ, տէ-
տի. էշ նահատակութիւն տուր: Իշթէ պէ-
նիմ գաւառութիւնում պու անէտէք, վէ
շիմաէն սօնրա տա՝ տաիմա պու տուր. եա-
նի Հոռոմ հայրապետինի Եկեղեցիին պաշը
տէյի թանըրըմ վէ քապուլ իտէրիւմ, Հոգին
Սուրբուն բղլումունու իքրար իտէրիմ,
Հայրտան վէ Որդիտէն օլտուղունու: Որդի
Ստուլաճըն իքի բնութիւնու օլտուղունու,
աստուլաճային վէ մարդկային պիլիւրիւմ, է՛յ
պու պէօյլէ օլունճա, արամըզտա նէ՝ գալ-
ար. նիշին քիլիսէմէ կէլմէյի իսթէմէյօրսու-
նըզ: Այնի պու նէյէ պէնդէր. վաթթի իլէ
իքի ատամ վարըմըշ, դայէթ տօսթ պիրիպի-
րի իլէ, պունլար պիր էյեամ էյի կէշինտիք-
տէ, րասթ կէլիւր քի պիրինին մասլահաթը
գուհուր օլուպ տիարի քուրպէթէ չըքար. ի-
շինի թէքմիլ իթաիքտէ, տէֆա վէթանընա
տէօնէր սէնէլէր կէշտիքտէ. կիւնիւն պիրլին-
տէ պու իքի տօսթլարըն էվլատլէրի եօլտա
րասթ կէլիւպ պիրիպիրինէ վէ խօշ պէշ էթ-
տիքտէն սօնրա, սիւալ իտէր պիրի օպիրինէ.
փէտէրին նիճէ տիր. ճէվապ իտէր օ պիրի.
շիւթիւր էյի տիր ամա պիր խղեսուտա եիւ-

րէյի գիյատէ օյնատըղընտան, քուլաղը ա-
ղըրաշտը էյի իշիտէմէյօր: Պէրիքի տէ տէ-
յօր: Պէնիմ փէտէրիմին քուլաղը քէզա ա-
ղըրաշտը տըր էյի իշիտէմէյօր: Իշտէ պէօյլէ
պունլար վարըեօրլար փէտէրլէրինէ հապէր
վէրիեօրլար տույտուքլարընը: Արասը կիւն-
լէր կէշտիքտէ. իքիսինին փէտէրլէրի պիր
արայա կէլիպ. խօշ պէշ էթտիքլէրինտէ,
պաղլըրարաք հաթըր սօրարլար իշիթմէզ տէի.
վէ սէպէպինի սօրարլար. նէ՝տէն քուլաղըն
աղըրլանալ. օ ճա, պէրիքի օ պիրինէ, պա-
քարլար քի հիշ պիր շէյ օլտուղու եօք. չա-
շարլար նէ՝ օլա պու տէի. օլ տէմ պէլլի օ-
լուր քէնտի էլլատլարընըն մնաֆըքլըրը:
Շիմտի տէ պունա քըյաս, մապէնիմիդտէ պիր
շէյ եօք, անճա արատա մնաֆըք կիրտիին-
տէ պիզի սիզէ, սիզի պիզէ եաղնըշ աղնաթ-
մըշլար, էօյլէ իսէ կէլինիզ պիլիւրինիզ ի-
շինիզի գաաիէտէք, սօնը պօշ եէրէ փիւշ-
ման օլմայալընըզ, իշտէ պիլտիրտիմ:¹
(Շարուկեկի)

1 9 Ուրբաթ.— Այսօր բաշային դռնէն Հոռոմի
պատրիարքին հրաման գնաց Հալէպցոց համար թէ
Հալէպցիք Հոռոմ կը սեպուին պէտք է որ իր ազ-
գին եկեղեցին երթան, ինչո՛ւ թոյլտուութիւն
կ'ընէ քի Ֆրէնկի եկեղեցին կ'երթան, կ'երեւնայ
քի հոռոմի քաթուկի կը սեպուին ասոնք, չի նայիր
հայք իր ազգին քաթուկի, ինչպէս թէյպիէ կ'ընէ
կոր դու ալ նայէ՝ որ ասոնք ճամբայ դնեն եւ այս
հրամանը ըէյիլէն գնաց. հայք աս բանս գրգռե-
ցին որ մինակ իրենց իր ազգին քաթուկին ըրած
չըլլան. հոռոմ ալ ընելու է քի իրենց ըրածին
խօսք չըլլայ. նաեւ անոր ասոր կ'ըսեն քի տէրու-
թիւնը քաթուկիք չ'ուզեր կոր սալթ մեր ազգին չէ
աս եղածը, հոռոմին պիլէ հրաման գնաց: Բայց
հոռոմի պատրիարքը եւ ազգը իսկացի ըլլալով առջի
բերանը բէք աղէկ ըսին եւ աղէկ տեղեկացան որ
տէրութիւնը չէ աս բանը գրգռողը, էվլէրվ հայք
են, անոր համար բէք աղէկ ըսելով խուլլանմիշ ե-
ղան. վէրէ Հայոցմէ ալ կը վախնային: Բայց կա-
րող էին Հալէպցոց՝ Հայոց ըրածին պէս բաներ ը-
նելու, չըրին վերջը մտածելով թէ ընենք նէ գէշ
է վերջը: Էրնեկ էր հայք ալ քիշ մը մտածէին:

13 Դշ.— Երեք օրէն վերջը Հալէպցիներէն կ'եր-
թան հոռոմի պատրիարքին կ'ըսեն իրենց վրայ եղած
խապէրին համար. «Մալըմըզ վէ ըրալըմըզ փաաի-
շահըն տըր, ամա ճանըմըզ Ալլահըն»: Այսպէս կարճ
ճամբով ըսին. պատրիարքը կ'ըսէ. ա՛յ օղուլներ,
ինծի մի գուրցէք ադ խօսքը, դացէք դռանը գուր-

ցեցէք. ես չեմ աս բանը գործողը եւ խառնողը: Իրաւի էր որ ինք չէր աս բանս բնառողը, եթէ ուզենար կարող էր անոնց շատ բաներ ընելու, հաթթա իսպաթը կայ. հայոց պատրիարքը քանի մը անգամ հոռւի պատրիարքին խապէր խաւրեց ու մէկ անգամ մի ալ վէճիւր գնաց ըսելով. «Ժամանակը հիմա է, դու ալ ելիր ոտք, հալէպցոց հախէն եկուր. ինչպէս որ մենք կ'ընենք կոր մեր ագգիւն քաթօլիկներուն. բայց հոռւի պատրիարքը ահանջ չի դրաւ»:

Նայեցան հայք որ հոռւի պատրիարքը ականջ չի դնիր կոր ըսած խօսքերուն, խորհուրդ ըրին, հայոց պատրիարքը գնաց դուռը ըէյիզ էֆէնտին ըսաւ. էֆէնտիմ ինչ շահ մեր ըրածը, հոռւի ազգին մէջ ալ քաթօլիք կայ մէկ թախըմ մը որ Հալէպի կ'ըսուին. հոռւի են ազգաւ բայց ֆրէնկի եկեղեցի կ'երթան. պէտք է որ հոռւի պատրիարքին մէկ հրաման մը երթայ որ ան ալ նայի անոնց եւ քննէ:

Անիտէ հոռւի պատրիարքը դուռը կանչեց ըսելով թէ արքային հրամանը չե՞ս մի գիտեր, քու մէջը ալ կաթօլիկ կայ եղբր թախըմ մը որ Հալէպի կ'ըսուին կոր, ասոնք ազգաւ հոռւի են, ֆրէնկի եկեղեցի ինչո՞ւ կ'երթան, ինչո՞ւ չես նախիր կոր քի քեզի թաաթ ընեն: Պատրիարքը խեղացի ըլլալով ըսաւ. էֆէնտիմ ասոնք ալ հոռւի են, հալէպի ըսուիլը իրենց քաղաքներուն անունը իրենց մէկ մահլէզ մը եղբր, ֆապաթ իրենց այնը էօթէտէն պէրու ֆրէնկի եկեղեցիին մէջ իճրա կ'ընեն, այնի վրայօք մեր մէջը վէճ չկայ, կէրէք աս հոռւին եւ կէրէք հալէպցոց մատէմ քի տէրու թիւնը ինծմէ կը փնտռէ ամէնուն ալ քէֆիլիմ, եւ տէրութեան ինծմէ ուզածը քէֆիլութիւն չէ՞ մի: Հայոց պատրիարքը իր ազգին քաթօլիկին քէֆիլ չեղաւ տէրութեան առջեւը, բայց ես ամենայն իրօք քէֆիլ եմ. եկեղեցի եկեր են չեն եկեր, ես ամէնուն մեծով պզտիկով քէֆիլ եմ, քանի մը անգամ դրան հետ այսպէս խօսելով իսքեաթ ըրաւ դուռը, եւ անանկ ալ լսեցինք այն ժամանակը թէ հոռւի պատրիարքը ըսած ըլլայ ըէյիզին թէ՛ էկէր հայոց պատրիարքը իրեն ազգին քաթօլիկներուն քէֆիլ չըլլար նէ, էկէր տէրութիւնը գիտ գապուլ կ'ընէ նէ ես անոնց քէֆիլ կ'ըլլամ յէյի. այս խօսքը լսեցինք հոռւներէն, հոռւի պատրիարքը յիտայ հապար խաւրեց հալէպցիներուն ըսելով. Այս միջոցին մէջ մի՛ երթաք ֆրանկաց եկեղեցիին որ մէկ առիթ մը չըլլայ ձեր վրայօք:

Հարկ եղաւ հալէպցիք քանի մը հոգի դուռը գացին ըէյիզ էֆ.ին ըսելով. ինչպէս առաջ հոռւի պատրիարքին ըսեր էին նէ, այնպէս ըսին եւ կըրկիւնեցին ասոր. «էֆէնտիմ, պիզ ըու՞մ քիլիսէսինէ կիտիպ ըու՞մ թապի օլամայըզ, զիմա պիզիմ վաթթիզիմիզ, նիքեհհըմըզ վէ էօլիւմիւզիւ ըու՞մար էթմէզ, իլա պիզիմ քէնտի բաբալըմըզ էտէր. օնլար ըլա իլհաբըլըմըզ ասլա եօգ տուր հիջ պիթ

ճիհէթլէ, վէ պիզիմ քի էրմէնի քաթօլիքիլի կիպի տէյիլ, օնլարըն հէր պիթ ատէթլէրինի էրմէնիլէր էտէրլէր», եւ ասոր նման իօսքեր, եւնա:

Յետոյ տէրութիւնը նայեցաւ որ պզտիկ իյնալու պէս բան եղաւ, հոռւի պատրիարքին հրաման գնաց. մատէմ քի հալէպցոց վրայ քաթօլիկի անուն կայ, տէրութեան հրամանը տեղը երթալու համար ժամանակ մը ելլան Պէյօղլուէն, երթան ֆիաղըտ հանէ քէօյիւն եւ ուր որ ուզեն նէ միսաֆիրի պէս Պատրիարքը բէք աղէկ ըսաւ. հալէպցոց հապար տուաւ թի հիմակու հիմա Պէյօղլուէն ելլան ուրիշ տեղ տուն բռնեն. հալէպցիք ալ բէք աղէկ ըսելով մեծերը հլան ֆիաղըտ հանէ քէօյիւ գացին եւ աղքատները մնացին հալէպցի ենք ըսելով: Կրնամ ըսել որ հալէպցոց Պէյօղլուէն ելլալու սէպէպ Հայերը եղան:

Այս միջոցին Հայք Ստամպուլի ժամը ջինել տալու համար իմտատիէ կը ժողվէին, Պէդքեան Յարութիւնը որ աս եղած բաներուն գլուխն էր չարութեան, օր մը կանչեց որ փողերանոցին մէջ ինչ ղըտար մարդ կայ ամէնքէն իմտատիէ առնուի, ժամու համար, չիւնքի հէմ հայ կայ հոն հէմ քաթօլիկ կայ, անկէց մատէ ըսաւ ստակ ժողովին, ամէն մարդուն հարցուր ստակ չառած հայոց եկեղեցիին ով որ ճշմարիտ ուղղափառ կը ճանչնայ, եւ եկեղեցին պացեր է անոնցմէ առէք իմտատիէ, ով որ չի ճանչնար մի առնէք, զէրէ ազգը կարօտ չէ անոնց ողորմութեանը, աս ընել տալովը կ'ուզէր իմանալ ով պացեր է. եւ գացողէն սաակ ժողովցիին եւ չի պացողէն չառին:

Կանք հիմայ մեր վրայ, առաջ ըսինք քի պատրիարքը Սամաթիայի եկեղեցիին մէջ քարոզին մէջ մէօճլէթ տուաւ որ ամէն մարդ բանը լնցնէ տէյի, նայեցաւ պատրիարքը որ էզ մը օր անցաւ եւ բան մը չեղաւ եւ նորէն ժամ գացող չեղաւ, չորս էսնաֆէ մարդ կանչեց պատրիարքարանը, խուլլուճիներէն, սրմաքէշներէն, սահաթճիներէն եւ խազալներէն. սկսաւ պատրիարքը նորէն առջի կարթացուած ֆէրմանին եւ հատին մէֆուսը հասկընել եւ էվէլով վախ ցուցնելով եւ ասոր տակէն մեռնիլ ալ կ'ըլլայ, սիւրկիւն կ'երթաք եւ աքորուած տեղերնիդ օլուի չօճուխնիդ կը զատեն, զատ զատ ուրիշ տեղեր կ'աքորեն եւ օլուի չօճուխնիդ այլազգի ձեռք կը մնայ, ասանկ ընելունիդ ասկից նահատակութիւն մը կ'ըլլայ, ասկէց ելածը գիտէ՞ք ինչ է, էշ նահատակութիւն է իմ դաւանանքս մինչեւ հիմա եւ ասկէց ալ վերջը տայիմա ան է, Եսնի Հուրայ Հայրապետին եկեղեցիին պաշտէյի թանըր վէ գապուլ իտէրիմ, Հոգին Սուրբուն բոլորումունու իքոր էտէրիմ քի հէմ Հայրտան վէ հէմ Բրդիտէն բոլիս օլուր, վէ Բրդին Աստուածըն իքի բնութիւնը օլտուլունու պիլիրիմ հէմ մարդկային հէմ աստուածային. պու պէօյլէ օլտուքտա տահա նէ՞ արամըպտա գալըր, նի՞չին քիլիսէյէ կէլմէք իսթէմիյօրսունուզ», ասոր պէս տահա ուրիշ թախըմ մը խօսքերով վերջ կուտայ:

ԵՐԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀԱՅԿԱՆՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՏԱԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻՒ՝ ԳՐԲԷՆ

ԳՐԻՄ Ա.—ԳԼ. Ի.Վ. — Մարդկային բուռնությունը
խորհրդածելու վրայ:

(Շար.)

Անա՛ղ, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը ի վախճանի,
խանի ու դեռ այսպիսի կանոնի կը գաղտնանի:

Վա՛յ մեզ երկ ա՛յսպէս ետեւ ըլլանք հանգիստի,
իրեւ թէ արդեւ խաղաղութիւն ըլլար եւ ապահովու-
թիւն. միևնոյն ժրմարիտ արքայքեան հետ մը չ'երեւիր
քնաւ մեր կենցաղավարութեան մէջ:

Հարկ անհրաժեշտ է ապախն ու իրեւ միամիտ
նորձնանք, դարձեալ հրահանգովն քաշելու վա-
րուց մէջ. հնար է յայտ մը ըլլար ապագայ ուղղութեան
եւ հոգեւորական մեծագոյն յառաջադիմութեան:

ՍՈՒՐԲ ՓԻԼԻՊՊՈՍ ՆԵՐԵԱՆ

(Շար. եւ վերջ)

Անհամար բազմութիւն մը ներկայ կ'ըլլար իր
քորոզներուն, Բայց իրեն առանձին խորհուրդ հար-
ցնելու գացողներն ալ քիչ չէին. զանոնք կ'ընդունէր
ո՛ր ժամանակ ալ երթային, չուզելով երբեք որ բռնի
թէ կը հանգչի, կամ արգելք մը ունի, կամ անհա-
գիտ է: Զափէ գուրս սիրով մը կը սիրէր հիւանդները,
մանաւանդ մահամերձները, և շատ անգամ անոնց
այցելութիւն ըրած ատեն կը շնորհէր անոնց այնպիսի
մխիթարութիւններ որ խալաւ կ'ազատէին անոնց հո-
գին մարդկութեան թշնամիին յարուցած փորձու-
թիւններէն: Երբեմն Աստուծոյ կ'ընդունէր անոնց
մարմնաւոր բժշկութեան հետ հոգեւոր բժշկութիւն-
նին ալ: Կղեմէս Ը. Քահանայապետը, կաթողիկոսի
բուռն ցաւէ մը բռնուած ըլլալով իր քով տանել
տուաւ այս սուրբ քահանան, և անոր ձեռքը բռնե-
լուն պէս առողջացաւ:

Իր աշակերտներուն մէջ տեսակ մը հոգեւոր ժո-
ղովի դրութիւնը մոռցնելու համար անոնց պատուի-
րեց ինչ ինչ կարգադրութիւններ և հրահանգներ, որ
յոժարակամ ընդունուեցան և ճշգրիտ գործադրուեցան:

Այս սուրբ քահանաները առաւօտները Եղբայ-
րակիցներու եկեղեցւոյն մէջ աստուածային պաշտո-
նունք կը կատարէին և ճաշէն յետոյ Ս. Երանդիմոսի
եկեղեցին կ'ընթացէին, ուր ամէն օր, շաբաթ օրէն
զատ, իրենցմէ չ'որս հոգի որոշուած էին ժողովրդեան
փոքր բարոյներ տալու քրիստոնէական վարդապե-
տութեան, բարքի ուղղութեան և սուրբերու օրի-
նականութեան վրայ: Այս եղաւ սկզբնաւորութիւնը հըն-
չ'կատար Սկզբնականութեան (Oratoire), որուն առաջինք

սիւններէն մին եղաւ Բարսիմոս Կարգինայը, որ սուրբ
Փիլիպպոսի յորգորանքովը սկսաւ յօրինել իր Եկեղե-
ցական ճարտարութիւնները, որոնց արժէքը ա՛յնքան
բարձր է որ ամբողջ ապագայ դարերն իսկ ըստ ար-
ժանւոյն զանոնք գովելու բաւական պիտի չըլլան:

Այս ընկերութիւնը Գրիգոր ԺԳ. Քահանայա-
պետէն հաստատուեցաւ 1573ին: Սուրբ Հիմնադիրը
իր զաւակներուն օրինակ կու տար ամէն տեսակ ա-
ռաքինութիւններու, յատկապէս աստուածասիրու-
թեան և խոնարհութեան:

Միշտ փառաւ եկեղեցական բարձր պաշտօններէ
և պատիւներէ: Երբեք չուզեց հատկութիւն և բաժնի
ընդունիլ. հաստատապէս մերժեց ոչ միայն եպիսկո-
պոսական աթոռներ այլ նոյն իսկ կարգինայական
պաշտօնը, որ իրեն առաջարկուեցաւ Գրիգոր ԺԳ. և
Կղեմէս Ը. Քահանայապետներուն կողմէ: Իր հիմնած
Աղօթման տանք Միաբանութեան ընդհանուր մեծաւո-
րութիւնն իսկ իրեն ընդունել տալու համար հարկ ե-
ղաւ որ Սուրբ Աթոռը հնազանդութեան զօրու-
թեամբ կերպապէս իրեն հրամայէ: Եւ այն ատեն
միայն հանգստացաւ երբ իր մահէն երկու տարի ա-
ռաջ, մեծաւորութեան պաշտօնէն հրաժարելով սկը-
սաւ ապրիլ Մեծ Բարսիմոսի վարչութեան տակ որ
իրեն յաջորդեց:

Հալածանքներուն ատեն իր համբարութիւնը ան-
յաղթելի էր: Երբ ամբաստանուեցաւ իբրեւ փասա-
կար ժողովներ գումարող և ժողովրդեան մէջ նորու-
թիւններ տարածող և արգիլուեցաւ խոստովանելէ
և քարոզելէ, անտրտունջ համակերպեցաւ, չքմեղան-
քի բառ մը իսկ չըսաւ, համարելով թէ իր մասին
որչափ վատթար գաղափար ալ ունեցուի շատ չէ, և
համոզելով ինքզինքը որ այս զրպարտութիւնները
դասեր էին որոնցմով Աստուած կ'ուզէր իրեն խոնար-
հութիւն սորվեցնել:

Ուրանոս Ը. կ'ըսէ թէ «Այս Աստուծոյ մեծ
ծառան այնքան յառաջ տարաւ քրիստոնէական մի-
հացուցումը որ անոր կատարեալ ուսուցիչ հան-
գիստացումը Արգարեւ իր մտքին լոյսէն իսկ հրաժա-
րեցաւ որպէս զի աւելի կատարեալ կերպով յանձնուի
Յիսուոսի Քրիստոսի առաջնորդութեան, և արտաքին
այնպիսի՝ գործեր ըրաւ որ այնքան բանաւոր չէին ե-
րեւեր, որպէս զի աշխարհի մարդիկ զինքը տկարամիտ
և խելագար համարին:

Բայց որովհետեւ փառք՝ խոնարհութեան վարձքն
է, որչափ խոնարհելու, կորսնալու կը ջանար այնչափ
աւելի կը պատուուէր: Ս. Կարողոս Բորրոմէոս, Ս.
Իգնատիոս Լոյոլացի, Պօղոս և Պրոս Դ., Կղեմէս Ը. Քա-
հանայապետները միշտ յարգած են զինքը իբրեւ մեծ
սուրբ մը: Կղեմէս Ը. որուն Քահանայապետութեան
օրով վախճանեցաւ, փորձով տեսած ըլլալով Փիլիպ-
պոսի ձեռքերուն մէջ գտնուող աստուածային զօրու-
թիւնը զանոնք հրապարակաւ կը համբարէր և Սուր-
բ ամենուն կը ներկայացնէր իբրեւ սրբութեան ամ.

թերի տիպար և ամէն առուքինութիւններու կառար-
եալ օրինակ:

Աստուած աւելի եւս կը փառաւորեր զայն: Ստեպ կը յափշտակուէր, և այն միջոցին գետնէն կը բարձրանար, և համակ լուսով կը շրջապատուէր: Ծը-
նընդեան գիշերը, անգամ մը Յիսուս անոր երեւցաւ
խորանին վրայէն նորածին հրաշագեղ տղու մը կեր-
պարանքով:

Ս. Փիլիպպոս, կուսութեան, աշպէս ըսենք,
պարգեւը ունէր: Որովհետեւ այս անգուգական ա-
ռուքինութիւնը կը ներշնչէր իր խօսքերովը, իր օրհ-
նութեամբը և իր արտաքին երեւութովը: Բայց ուրիշ
երկնային շատ պարգեւներով ալ ճոխացած էր: Միե-
նոյն ժամանակ շատ տեղեր և իրարմէ շատ հեռու
գտնուող զանազան անձերու երեւցաւ: Անգամ մը,
առանց Հռոմէն ելլելու, երկարօրէն խօսակցեցաւ Կա-
տարինէ անուամբ քարի մայրապետի մը հետ, որ կը
գտնուէր Ս. Օգոստինոսի Կարգին թոսքանայի մէկ
վանքին մէջ:

Պօղոս Փարիկիոս անունով մարդ մը մեռած էր
առանց անտեղ կարենալու այս Սուրբ Քահանայ զոր
թախանձանքով խնդրած էր: Երբ Սուրբը հասաւ և զա-
նիկա կանչեց յանուանէ, մեռեալը իսկոյն յարութիւն
առաւ:

Այս մեծ Սուրբը մեռաւ Մայիս 26ին, 80 տա-
րեկան, իր քահանայութեան 44երորդ տարին, իսկ իր
Ընկերութեան հիմնարկութեան 29երորդ տարին:

Թօթը տարի ետք իր մարմինը գտնուեցաւ ան-
վթօր, անապական և անուշաբոյր:

Իր սրբացուցման խնդրին հետամուտ եղաւ մա-
նաւանդ Պօղոս Ծ. խնդրանքով Ֆրանսայի Հեղինու
Գ. Թագաւորին, որ Սուրբին ջանքերովը հաշտուած
էր Հռոմէական Եկեղեցւոյն հետ: Վերջապէս սրբա-
ցուցման արարողութիւնը կատարուեցաւ Գրիգոր ԺԵ.ի
կողմէ, Լուդովիկոս ԺԳ.ի և մօրը Մարիամ Մէտիլ-
եանցի խնդրանքով 1622ին Մարտ ամսուն:

Գ Ի Տ Ա Վ Ա Ն

ՄԱՐԴՈՒՍ ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ԳԻՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ԸՍՏ ՀԱՒԱՏՔԻ.— Նախապատմութեան
բազմապատիկ գիւտերը և յառաջդիմութիւն-
ները, անյիշատակ դարաշրջաններու մէջ ապ-
րող նախնիքներու կմախքները, որ հետզհե-
տէ երեւան կ'ելլեն, զգայացունց լուրերու
մարմաջով վարակուած մամուլին կողմէ հան-
րութեան ներկայացուած այն շարք մը յա-
ճախ իրարու ներհակ իրողութիւնները կա-
թողիկէներէն ոմանց խղճերը խռովութեան
մատնելու բնոյթն ունին կարծես:

Այն ներհակութիւնը որ գիտութեան եւ

հաւատքի վարդապետութիւններուն մէջ
ստեղծելու ջանք կ'ըլլայ, երեւութակա՞ն է
թէ իրական: Ահա այս հարցը կ'առաջարկեն
ինծի ամէն շարաթ շատ ընթերցողներ:

Ուստի լուսաբանութիւն մի տալ կարեւոր
է: Պիտի ջանամ ըստ կարի հակիրճ և որոշ
կերպով նոյնը ընելու:

Նկատենք նախ որ կաթողիկէի մը համար
յայտնութիւնը կը կազմէ համատարր, ամբող-
ջական, անվիճելի բոլոր մը, որուն իւրա-
քանչիւր մասը չի կրնար վերաքննութեան
ենթարկուիլ, — որովհետեւ Աստուծոյ մեզի
ուսուցած ճշմարտութիւնն է, — բայց պար-
զապէս մարդկային գիտութիւնը այնպէս չէ:
Այս վերջինը, մեր մտաւորական տկարու-
թեան և մեր վայրկեանական գաղափարներուն
ցոլքը, իսկապէս «ալիտատան և տարուբեր»
է, այնպէս որ այս օրուան ճշմարտութիւնը
վաղուան մոլորութիւնը կ'ըլլայ երբեմն:

Կաթողիկէին պարտքն է մեր գիտութեան
անհաստատութեան դէմը դնել յայտնութեան
հաստատութիւնը: Մարգա ստեղծուեցաւ Աս-
տուծոյ պատկերին համեմատ, կատարելու-
թեան վիճակի մը մէջ: Սկզբնական մեղքէն
ետքը, անկեալ առաջին մարդը կրցաւ իր
զաւակներուն փոխանցել իր գիտութիւնը,
բայց պարզապէս մարդկային եղանակաւ:
Յետոյ տեղի ունեցաւ Ս. Դիրքին պատմած
ցրուումը: Մարդկային ազգը սփռուեցաւ ամ-
բողջ աշխարհի վրայ: Այս միջոցին մի քանի
ցեղեր վատթարացան, ամբողջովին կամ մա-
սամբ կորուսին յայտնութեան նուիրական
աւանդը և ամենէն ստոր բարբարոսութեան
մէջ ինկան:

Ասոնք Ս. Դիրքէն ճշգրիտ կերպով հաս-
տատուած կէտեր են, որոնց մասին մեր հա-
կառակորդներուն ոեւէ գիշողութիւն չենք
կրնար ընել:

Ասկէ զատ պիտի տեսնենք թէ ճշմարիտ
գիտութիւնը չի կրնար և չպիտի ալ կարե-
նայ իրօք հակառակիլ այս վարդապետու-
թիւններուն:

Ի՞նչ կ'ըսէ մեզի նախապատմութիւնը երբ
կը խնդրուի ճշդիւ մարդուս երկրի վրայ ե-
րեւան գալուն թուականը:

Թէ մարդկութեան ամենահին, ստոյգ հետքերը միշտ երեւան եկած են չորրորդական դարից ետեւ յառաւել, Վաղը, Թերեւս, երրորդականին մէջ եւս հանդիպինք անոնց. նախապատմաբաններէն ոմանց կարծիքով այս քանս հաւանական է:

Բայց կաթողիկէ վարդապետութեան տեսակէտով այսօրինակ հաստատութիւն մը գլխովին անսարքեր է:

Ասկէ զատ մարդուս երեւման թուական մը որոշելը կ'երթայ կը յանգի երկրաբանական շրջաններուն տեւողութիւնը սահմանելու: Արդ ոեւէ լուրջ, ծանրախոհ գիտուն չի կրնար այսպիսի խնդրի մը միջամուխ ըլլալու յանգնիլ. տուիքներէ բոլորովին զուրկ ենք այս մասին:

Բայց կրնանք համարձակ հաստատել թէ անշուշտ սխալ և չափազանցուած են 400,000 կամ 200,000 տարիները որ պարբերական կամ օրական թերթեր մէջտեղ կը նետեն գերմանական աղբիւրներէ ներշնչուած յօդուածներով:

Եթէ երբէք ճշմարիտ գիտութիւնը օր մը կարենայ այս մասին մեղի լուսաբանութիւններ տալ, պիտի հիանանք այո՛, բայց այս եզրակացութիւնները երբեք չպիտի կարենան Ս. Գիրքին հակառակիլ: Այս վերջինը, իրօք թէեւ ժամանակագրական հատակոտոր տեղեկութիւններ կը մատակարարէ, բայց երբեք նպատակ չի ցուցներ տայու այնպիսի ընդհանուր ժամանակագրութիւն մը, որով կարելի ըլլայ ճշգիւ որոշել Ադամի ստեղծման թուականը:

Թիչեցինք Ադամը, ըստ յայտնութեան, առաջին մարդը:

Այս մասին գիտութիւնը կրնայ իր վճիռը տալ: Ո՛չ երբէք. այն զուրկ է ամէն միջոցէ: Ինչ որ մեղի կ'ըսէ — և պէտք է որ արձանագրենք այս գլխաւոր նախադասութիւնը — այս է թէ իրողութեանց ամբողջութիւնը կը ձգտի հաւաստելու միութիւնը մարդկային տեսակին, ուստի հասարակաց նախածնողի մը, որ որոշեալ ժամանակ մը, երկրիս մէկ որոշեալ կողմը երեւան եկած է:

Այժմ գիտականօրէն հաստատուած է որ,

եթէ կերպափոխական ենթադրութիւնը ընդունիլ ալ ուզուի, մարդուս մարմինը կապիկէն յառաջ չի կրնար գալ:

Հակառակը պնդելը, ինչպէս ըրին երբեմնի բնաբաններէն ոմանք, կամ ինչպէս փողով ու թմբուկով կ'ընեն տակաւին յետսամիտ, պնդագլուխ հրապարակապիրներ, մարդաբանութեան ամենավերջին հետազոտութիւնները իսպառ անգիտանալու հաւաստի ապացոյց մըն է:

Ընդհանուր կերպով պէտք է լաւ գիտնալ որ կերպափոխութիւնը վերջ գտաւ. մեռաւ, ոչ թէ բռնութենէ այլ նքողումէ: Կան մի քանի գիտուններ որ դեռ բարեշնչական են, սկզբունքով, բայց այնքան տարտամօրէն որ այս մասին չեն կրնար ճշգիւ իրենց տեսութիւնները:

Այս նշանաւոր հաւաստիքը պէտք չէ՞ որ միանգամ ընդ միշտ մեզ, կաթողիկէներս, ետ կեցնէ անձնատուր ըլլալէ պաշտօնական ըսուած գիտութեան մը հոսանքին:

Երբեք աչքէ չհեռացնենք յայտնութեան աւանդը. անոր պարունակած ճշմարտութիւնները յաճախ թոյլ կու տան մարդկային գիտութեան հաշուագիրը կազմող իրողութիւններուն լաւ եւս խելամուտ ըլլալու:

Պիտի հասկնանք, օրինակի համար, թէ ի՞նչպէս մարդկութիւնը փոխանակ տակաւ առ տակաւ բարբարոսութեան շրջաններէն քաղաքականութեան անցնելու, ճիշդ ասոր հակառակը ընելով սկսեր է:

Եւ ամենալաւ ապացոյցը թէ նախապատմական մարդը, գոնէ այն որ մեր կողմերը կը բնակէր, անկեալ մը, վաստակեալ մըն էր, այս է որ որչափ հեռուն երթանք անցեալին մէջ, յայտնի, բնական զագանութեան հանդամանքներու քով կը գտնենք իր նախնական գերազանցութեան հետքերը. մարդկային գիտութիւնը խոյս տուած էր անկէ. բայց աւանդութիւնը, թէեւ յամրաբար այլափոխուած, պահած էր անոր մէջ՝ աստուածութեան, պաշտամունքի և անդէնական կեանքի մասին ծանօթութիւններ:

Ուստի պէտք է բարձրաբարառ յայտարարել թէ ոչ միայն ոեւէ նախապատմական

գիւտ չի տկարացներ մեր հաւատալիքները, այլ եթէ մեր գիտունները դրականապէս անսնցանելի միջնորդ մը չհաստատէին իրենց գիտութեան և յայտնեալ ճշմարտութեանց միջեւ, այս վերջինները շատ անգամ անոնց առաջնորդ պիտի ըլլային նախապատմութեան դեռ եւս միթամած բաւիղին մէջ:

Մենք կաթողիկէներս, այս անասանելի գետնին վրայ կանգնելով, վախճալու բան մը չունինք երբէք, և ընդհակառակն, մենք ենք որ գիտութիւնը և լաւագոյն գիտութիւնը կը մշակենք: Բնաւ չմոռնանք արդարեւ որ յայտնութիւնը փորձառական կարգի բան մըն է, հաւասար ամենահաւաստի իրողութիւններու և ամենաստուգ օրէնքներու, զորոնք միտքը կը հետեւցնէ բնութեան զննութիւններէն:

Ա. Թ. ՄՕՐԷՕ

ՖԱՐՄԱՍՕՆՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

Յօդ. Ա.— Ինչ որ է ան իր վարդապետութեան տեսլիկութիւնը:

1. Ֆարմասօնութեան, — ինչպէս որ է, — դաւանած վարդապետութիւնը զուտ բնապաշտութիւնն է. այսինքն մի միայն բնութիւնը կ'ընդունի, ու կը մերժէ ուրիշ գերբնական տարր և յայտնութիւն, նամանաւանդ քրիստոնէական յայտնութիւնը: Ինչպէս իրեն հետեւողներուն գրքերուն մէջ յայտնի կ'երեւի:

Այլ աւելի անդին կ'անցնի մերժելով ամէն աստուածային ծագում ունեցող ուժ և կարողութիւն. միայն այս աշխարհի վրայ հնարաւոր եղած երջանկութիւնը կը փնտռէ. մնացած բոլոր բաները աւելորդապաշտութիւն և նախապաշարում կ'անուանէ:

Ուստի բնութիւնը աւելի սեղմեալ իմաստով կ'ուզէ առնուլ, սահմանափակելով և կաշկանդելով զայն ներկայ կեանքի և զգալի բաներուն շրջանին ու շրջանակին մէջ:

Աստուած կա'մ չկայ և կա'մ եթէ կայ՝ օտարական մըն է ան մեզի համար (կ'ըսէ

Ֆարմասօնութիւնը), և մարդս ինքն իր վախճանն է: Ասոր համար այս բնապաշտութիւնը կը կոչուի նաև մարդասիրականութիւն կամ մարդկային վարդապետութիւն. վասն զի մարդէն զատ ուրիշ բան չի ճանչնար, և մարդս լոկ ինքն իրեն համար կ'աշխատի, կ'ըսէ:

2. Ֆարմասօնութիւնը իբրև ընկերութիւն.

Ֆարմասօնութիւնը պարզ դպրոց մը չէ որ իր մէկ վարդապետութիւնը դաւանի. հապա՛վ երոյշիչեալ վարդապետութիւնը մարդկային ընկերութեան մէջ իրադրութիւնը նպատակաւ հաստատուած ու կազմակերպուած ընկերակցութիւն մըն է, որ կը տքնի իր դաւանած վարդապետութեան յարմարցնելու ամէն օրէնք և հանրային վարք ու բարք և սովորոյթ, և քարուքանդ ընելու իրեն հակառակ նկարագիր ունեցող ամէն ինչ:

Յօդ. Բ.— Ֆարմասօնութեան միջնա ցարդ ըրածն է:

3. Մեր նախնեաց Քրիստոնէութիւնն ընդգրկելէն ի վեր, յընթաց դարուց տակաւ առ տակաւ ընկերութիւնն անոր ոգւով տոգորուեցաւ. օրէնսդրութիւնք, կարգ կանոն և հանրային բարքն ու սովորոյթք ըստ այնմ կը կազմակերպուէին, իսկ անոր ոգւոյն ու սկզբանցն հակառակ ամէն ինչ կը խափանուէր. և մեծաւ մասամբ յաջողած էր այս օգտաւէտ, յաւաքդիմասէր ու պատուաբեր գործն:

Նկեղեցական իրաւունքներն լիովին ճանչցուած և յարգուած էին. անոր նախադրութիւններն յարգանքով կ'ընդունուէին, և կամովին կը շնորհուէին անոր արտօնութիւններ, որպէս զի քրիստոնէին կենցաղը՝ արգելքներու չենթարկուի, այլ ընդհակառակը օժանդակուի հանրային կարգուսարքէն:

4. Սակայն հակաքրիստոնէական ոգին Ֆարմասօնութեան մէջ բարձրանալով՝ գործել սկսաւ, նախ զաղտնի կերպով, յետոյ՝ բացէիբաց, բայց միշտ իր հակառակ ոգւովն յամառելով:

Ամէն առիթներն իբր պատրուակներ նկատել սկսաւ և ամէն միջոց գործածեց արն

ատենուան տիրող կարգ կանոնն հարուածելու համար, Հին ընկերութեան թերութիւններն՝ որոնք ամէն մարդկային ձեռնարկներու մէջ ալ կրնան պատահիլ ամէն տեղ, առիթներ կը նկատուէին նորանոր յարձակմանց, հետեւաբար առիթն ներկայանալուն պէս՝ պատրուակ կը նկատէր և իրեն օգնութեան նիւթ կ'առնուր գիտութիւնը, զարգացումն, իշխանաց իրաւունքները, ժողովրդոց ազատութիւնը, հաւասարութիւնն ու ամենուն եղբայրակցութիւնը:

Հին դիւանագիտական և մասամբ ալ ընկերական կարգն ու օրէնք տապալեցան: Փարմասունութիւնն ցնծութեամբ կը նշմարէ իր այս կործանարար և աղիտաբեր գործը, և բարձրագլուխ կը սոնքայ նորանոր շահատակութիւններով, այսինքն Յւրոպայի մէջ կրօնաւորական միաբանութիւնները հալածելուն, եկեղեցական կալուածոց գրաւման և Սրբազան Քահանայապետին աշխարհական իշխանութիւնը արգիլելուն համար:

Յօդ. Գ.— Փարմասունքեան ուզածը:

5. Յարդ յիշուածներն անցելոյն մէջ կատարուեցան. իսկ ապագային՝ ֆարմասունութիւնը խոհեմաբար կ'ուզէ գործել, եռանդով, հանդարտութեամբ և հաստատամտօրէն յառաջ տանիլ իր ձեռնարկը, աւելելով քրիստոնէական նկարագիր ունեցող ամէն բան, և ինչ որ գերբնական և կրօնական է՝ տակաւին հանրային գործոց՝ նամանաւանդ կրթութեան և դաստիարակութեան մէջ:

Յօդ. Դ.— Դործածել ուզած միջոցները:

6. Փարմասունութիւնը միմիայն ակադեմական միջոցներով չի գոհանար իր տարածման գործունէութեան մէջ (պրոպականդին), այլ՝ նախ և առաջ ամէն գոհողութիւն աչքն առած՝ կ'ուզէ հանրային դաստիարակութեան մենաշնորհը ձեռք ձգել. մինչդեռ բնական օրինօք և իրաւամբ այդ վեհ գործն զաւակներու կրթութեան՝ նախ կը պատկանի ծնողաց. քանզի, խանդակաթ սէրն՝ զոր ունին իրենց որդւոց վրայ, աւելի ազդու կերպով կը սրբաբերէ ու կ'ուղղէ անոնց մտային սխալ

ըմբռնումները եւ կատարած անհաճոյ գործքերը, եւ այնպէս մը կ'ընէ որ անոնք լաւ եւ բարեպաշտօրէն կրթութիւն մատաղ հասակէն սկսելով:

Կը խորշի եկեղեցական հսկողութեամբ կառավարուած թաղային եւ կրօնաւորաց տեսչութեան ներքեւ գտնուած զպրօններէն, եւ չուզէր որ կաթողիկէից յանձնուի երիտասարդաց դաստիարակութիւնը. ընդհակառակը կ'ըղձայ որպէս զի բոլոր զպրօններն հակառակութեան՝ թշնամական նկարագիր ունենան եւ կամ գոնէ անտարբեր գտնութիւն կաթողիկէութեան հանդէպ:

7. Ընդհանրապէս կը յանձնարարէ որ իրեն չպատկանող կամ համակիր չեղողներուն ու եւ է պարագայի մէջ տէր չիլին ու չի նպաստեն. նոյնպէս ալ անոնց՝ որոնցմէ չի յուսացուիր որ օր մը կարենան իրեն պատկանիլ:

Կ'ուզէ որ կրօնական նկարագիր ունեցող ամէն բանի վրայ կոսկած ունենանք:

Կը պատուիրէ դիակիզումն, լոկ քաղաքական մեռելաթաղն ու ամուսնութիւնը, եւ մինչեւ իսկ արգիլել Մկրտութիւնը որչափ հնար է:

8. Ասով կը հասկցուի թէ որքան ծայրայեղութիւններ եւ խեղաթիւրումներ կը հնարուին կղերն ու կաթողիկէ հաստատութիւնները վարկաբեկելու համար, զանոնք յետադիմական եւ ապիկար մոլեռանդ հռչակելով ձրիաբար եւն. եւն.:

Որքան վարպետութեամբ ալ գիտեն փայլալիլ ոմանց ունայնաթրութիւնը եւ մինչեւ իսկ կղերական դասին մէջ, որպէս զի զանոնք որսան եւ գործածեն վերնագոյն իշխանութեան եւ նուիրապետութեան դէմ մաքառելու համար:

9. Այսու հանդերձ կը ջանան կեղծել եւ ցոյց տալ թէ իրենք յայնախոն կամ ազատաւիտ են. բնաւ հակառակութիւն չունին կաթողիկէութեան եւ կղերի դէմ. միայն թէ ոգւով չսփ կ'ատեն իրենց կոչման համաձայն չվարուող կղերները, կը մաքառին ու կը ձաղկեն ծայրայեղութիւններն ու ապօրինի բաները եւն. եւ ուրիշ քաղաքական նպա-

տակ չունին, այլ միայն կ'ուզեն բարիք ընել, խաղաղութիւն և ազատութիւն գտնել և գտնել տալ. և այս ալ կը կայանայ այն ազատագրութեան մէջ՝ որ է ճողոպրումն կրօնական, եկեղեցական օրէնքներէ և կաշկանդումէ:

Եւ այսպէս գեղեցիկ խոստումներով, փայլուն ապագայի երազներով ժողովուրդը խաբելէ, Աստուծոյ և անոր դատաստանին ու Եկեղեցւոյ, հաւատոյ մասանց, բնական և գերբնական օրէնքներու պաղափարը մաքսբէն ու սրտերէն հեռացնելէ, և անխղճօրէն կզերն ու նուիրապետութիւնը վարկաբեկելէ վերջ՝ բանաւոր էակ մարդն՝ անբան անասնոց դասէն ալ վար՝ մեքենական (մագստնոց մեքենայի) անգիտակից զիրքին մատնելէն յետոյ, չեն չիկնիր նաև ինքնագիտակից ու պարտաճանաչ ախոյեաններ հանդիսացող կաթողիկէ անհասներուն ոտնձգութիւն, լուսամբ, զրկանք և մինչև իսկ սպառնալիքներ ընելէ թէ՛ խօսքով, թէ՛ գրչով և թէ՛ գործքով:

Ահա խոստացուած ազատութիւնը՝ որ է գերութիւն ֆարմասութեան քմայքներուն և մէն մի ականարկներուն ազդեցութեան տակ:

Մ. Ծ. Վ. Մ.

(Շարունակելի)

ԼՈՒՐՏՏԱ

25ԻՆՁԻ ՊԷՅԸ ԷԼ ՄԻԼԷԼ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԳՕՆԿՐԷՍԻ

(Տեվաւի)

22 Բուլիս Չարչէնպիս սապահը վէժիլ գարտինալ զայէթ պէօյիւք պիր հիւրմէթլէ հազըր պուլունան պիր ճէմմի զաֆիր գարչըսնտա Լուրտ մաղարապնտա պատարագ թագաւիս իթտիքսէն սօնրա, բիւքուպընա թախտիս օլընան արապայա կիթմէք իչուն, էթրաֆընը ինթա էթմիչ օլուն տինտարանը եարմագ գապիլ օլամամը, չէօյլէ քի էլինի թապպիլ իտէնլէրէ վէ հազըր պուլընանյարա օրհնութիւնընը վէրէրէք կիթմէսի վէ արապաւընա յաքիս օլմասը թամմ պիր սաաթ սիւրմիւչ տիւր:

Գօնկրէսիսթլէր սինէյի տինտարանէլէրինէ գօնկրէնին միտալընը վէ Լուրտըն ալէմէթի ֆարիգասընը թալիպ իթմիչ օլարագ եաւըր կիճէտէն իթիպարէն քիլիսալարտա թագտիս օլընան պատարագլարտա հազըր պուլունըյօր վէ պիր գըսմը միւնֆէրիա, տիկէր գըսմը տա մէնսուպ օլտուգլարը գիւմրէ իլէ պէրապէր զիյարէթկեհչլարը տօլաչըյօր վէ պու սուրէթլէ ագչամըն սաաթ տէօրտիւնտէ աչըրաճագ օլան վագթը մուայեհէնի պէքլէյօրլարտը: Բէյտէրրէյ եէնի գօնկրէսիսթլէր վարիտ օլմագտա վէ հազըրունըն ասէսի կիթտիքճէ արթմագտա իտի:

Սաաթ իւչ պուչուքտա Լուրտ Մայր եկեղեցիսինին ուլու գամբանալարը չալընըյօր վէ էհայիյի գօնկրէյէ տավթ իտիյօրտը: Եէհարին միւլթէլիֆ սօգաղլարընտա սէլլէր կիպի ինսանյար պօշանմայա վէ Մայր եկեղեցիսին զայէթ վասի մէյտանընը իսթիլայա պաչլաւիչլարտը: Պու մէյտանըն Բօզէր գարուսընըն ճիհէթի զարպիյէսինաէ հազըրլանմը օլան էսըլանատտա գարտինալար, արքեպիսկոպա վէ եպիսկոպոսլար ախզը մէվգը իթմէքտէ, քահանայ, աշխարհական, էրքէք վէ գաւըն տախի մէյտանտա եսն եանա գայիմէն տուրմագտա իտիլէր:

Քիլիսանըն սաաթը. Ս. Աստուածածինին պիր մէտհիյէսի մագամընտաքի ալագէսիլլէ տէօրտիւ չալտը: Պունուն իւզէրինէ պէյն էլ միլէլ Հաղորդութիւն գօնկրէլէրինին ըէյիսի տայիմիսի պուլընան նամիւր արքեպիսկոպոսը Մօնս. Հէյլըն՝ քիւրսիյի խիթապէթէ չըգարագ, վէքիլ գարտինալ թարաֆընտան գօնկրէնին ըէսմէն քիւչատ իտիլմիչ օլտուլընը իլան իթտիքսէն սօնրա, իչպու 25ինճի գօնկրէնին նէ՛ սէպէպէ մէպնի Լուրտտա սագտ օլունտուղընը իյլահ, վէ Մատրիտտէ պիր գրալըն, Վիհննատա պիր իմբէրաթօրըն իչթիրաքընտան սօնրա մութլագա օնլարըն ֆէվպիստէ օլան պիրինին հիւմայէսի թանթընտա գօնկրէնին իճթիւմը միւնասիպ կէօրիւլտիւլինիւ վէ պինաէն ալէյհ տէ գրալլար վէ իմբէրաթօրլարըն սուլթանը պուլընան Վալիտէթուլլահըն թօքրաղը սալըլան Լուրտ պէլտէսինին ինթիխապ իտիլտիյինի պէյան:

վէ պու գօնկրէյէ գարտինալ Բինիաթէլլիի վէքիլ թային իտէն Բաբա հազրէթլէրինին նամէյի ըէսուլանէլէրինի ալգըլար արասըն-տա գրասթ իթտի :

Պուլտան սօնրա ուրա իլէ խաթիպէր քիւրսիյի խիթապէթէ չըգարագ իրատը նութդ էյլէտիլէր վէ Լուրտ եպիսկոպոսը Մօնս . Շէք-վէր կէրէք քէնաի վէ կէրէքսէ ճէմաաթը նամընա օլարապ Բաբա հազրէթլէրի հագ-զընտա բէրվէրտէ էյլէտիլի հիսսի ուպուտի-յէթ վէ ինթիրամը արդ էյլէտիքսէն սօնրա , վէքիլ գարտինալա , տիկէր գարտինալարա , արքեպիսկոպոս վէ եպիսկոպոսարա , նիհա-յէթ գօնկրէյէ իշթիրաք իթմէք իւզրէ Լուր-տա կէլմիշ օլան ումուլ զէվաթը քիրամա պէյանը թէշէքքիւր իթմիշ վէ ալգըլար ա-րասընտա քիւրսիտէն էնմիշ տիր :

Պուլնըն իւզէրինէ վէքիլ գարտինալ էս-թրատըն էօն թարաֆընա կէլէրէք ճէմաաթը սէլամլար վէ ուզուլն , ֆագաթ ղայէթ մա-նաուար ֆրանսըզճա պիր նութգ օգույարապ մուհիմն նօզթալար թէմաս իթտիյի կիպի , Ֆրանսայը վէ Ֆրանսա ճէմաաթընը թագաիր իտէրէք սէօզիւնէ խիթամ վէրտի : Գարտի-նալըն պու նութգը տէֆալարճա ալգըլար , պրավօլար , եաշասընլար իլէ գաթ օլունտը վէ սամիուլն իւզէրինէ բէք պէօյիւք պիր հիւսնի թէէսիր էյլէտի : Չօզլարընըն կէօզլէ-րինտէն տանէյի տիւմու տէօքիւլալիւ կէօ-րիւլիւյօրաը :

Գարտինալտան սօնրա Իրլանտանըն ին-թիյար միւհիթէրէմ գարտինալը վէ Նիւհօրըն սիննինին իլէրլէշմիշ օլմասընա լաղմէն ղա-յէթ հէրարէթլի օլան Ֆարլէյ գարտինալը , Մատրիտ գարտինալը , Սանթա-Սէվէրինա արքեպիսկոպոսը , Լիզպօն գարտինալը , Գօ-լօնիա արքեպիսկոպոսընըն մուալինի վէ սա-յիր տիւհաթը պէլաղէթլէր քիւրսիյէ չըգա-լար վէ մէնսուպ օլուուպարը միլլէթլէր նա-մընա խոարէի քէլամ իտէրէք Ֆրանսայը սէ-լամլատըլար վէ գօնկրէյի թէպիւլ իթտիք-տէն սօնրա ասըն հազըրըն նէճաթ ու սէլա-մէթինէ , խարապա տօղրու իլէրլէմէքտէ օ-լան միլլէ ու ազվամըն անանաթը գատիմէյէ իրճաընա , ճէմիէթի պէշէրիւնին թէրֆիյն ու

խալանա եէկեանէ չարէ՝ Յիսուս Գրիստո-սըն Ամենասուրբ Հաղորդութիւնտա մէլէ-քիւթիւ օլուուղըն տէգիգ վէ ճէլիլ տէլիլ-լէրլէ խապաթ ու թաստիգ իթտիլէր : Միւս-թէլիֆ լիսանլարտա իրատ օլունան պու նու թպլար մէք չօգ տէֆալար տէվամը սու-րէթաէ ալգըլանմը տըրլար :

Պու սրատա Րէյմա արքեպիսկոպոսը գար-տինալ Լիւսօն իլէրիլէտի , պիր ալգըլ թու-ֆանը տըր գօթուլ . ալգըլար արթտըքճա արթտը , չէօյլէ քի միւշարիլէյ գարտինալըն իշարէթի իւզէրինէ անճաթ թէսքինի գապիլ օլուլ : Գարտինալ Լիւսօն պիր խարիգայը պէլաղէթ տէնսէ սէգա տըր : Ֆրանսա եպիս-կոպոսլարընըն էն գըտէմիսի քէնտիսի օլմագ հասէպիլլէ տիւնեանըն չար ճիհէթինտէն կէլ-միշ օլան գարտինալ , արքեպիսկոպոս , եպիս-կոպոս , լուհպան վէ աշխարհականլարա , Ֆրանսա նամընա պէյանը թէշէքքիւր իթ-տիքտէն սօնրա , Ամենասուրբ Հաղորդութիւ-նըն գարընտա վէ Լուրտ Սուլթանընըն ալաղընտա իճթիմա էյլէմիշ օլան պու միւս-թէլիֆ միլլէ ու ազվամ գօնկրէսիթլէրինին այնի իթիգատտա պուլընմալարը , այնի իմա-նը իպրար իթմէլէրի , այնի բէտէրէ էվլատ օլմալարը , ալըսըզ ղալըսըզ պիր ալիլէ թէշ-քիլ իթմէլէրի վէ տանա տօղրուար պիր թէք պիր վիճուտ օլուպ , պիր ըէսէ մալիք պու-լունմալարը գաթօլիք քիլիսասընըն պիրլի-յինէ , ումուլիյէթինէ բարլագ սուրէթտէ տէ-լալէթ իթտիյինի վէ պու միւսթէլիֆ ազա-լարտան միւթէշէքքիլ վիճուտը մանէվինին ղըտա ու նաֆագայը մանէվիտի տէ պիր օլ-տուղընը , վէ գաթօլիք քիլիսասընտա Հա-ղորդութիւն պուլընտըքճա , պու վիւճուտըն տա լապըթայը իթթիհատը պագի գալաճա-ղընը , պիր ֆասաէթի խարիգ իւլ ատէ իլէ պրավօ վէ ալգըլ սէտալարը արասընտա թաս-տիգ վէ իյզան էյլէտի :

Հալա ֆիլվազը պուլուլթը իտի իսէ տէ , գօնկրէնին իշթիղալաթըն մէն իթմէյօրաը , անճաք քի կէօլլէրին պու գօ կրէ հազըն-տաքի մէմուլնիյէթինէ զանն իտէրսին պիր իշարէթ օլմագ իւզրէ , արա ուրա ըէք խա-ֆիֆ սուրէթտէ սէրիյօր վէ լանմէթի ա-

սիւմանը հազարուն իւզերինէ էնտիրիօրտը :

Սաաթ ալթը պուչուդու կէչմիշտի, գարտինալ Լիւսոնըն նութգընըն ապապինտէ Լուրտ եպիսկոպոսու թարօրա չըզըլաճաղընը, ֆա-գաթ օ գատար պինլէրճէ էհայի իշթիրաք իտէճէք օլուրսա, իլէրիլէմէք գապիլ օլա-մայաճաղընտան, աշխարհականլարըն՝ էսլա-նատ մէյտանը էթրաֆընտա տուրմայարընը վէ եալընըզ սընֆը բուհպանըն թարօրա իշթի-րաք էլլէմէսինի նազիք սուրէթտէ բէճա էյ-լէտի : Ատէտի կիթաիքճէ արթմըլ օլան քա-հանալար իւչէր պէշէր տիզիլմիշ, պիր չար-եէք սաաթլըք եէրէ գատար ուզանմըլլար-տը վէ Ս. Հաղորդութիւն տահա ամպոլմանի ալթընա պիլէ կէթիթիլմէմիշտի : Լուրտըն դպրաց դասը արմոնիօմ իլէ օ գատար կիւ-զէլ սուրէթտէ թէղաննիյաթտա պուլունը-յօրտը քի ինսան խահ նա խահ քէնտիսինի կէօյլէրտէ զանն իտիօրտը : Թարօրա պիզիմ Արհի. իւչ եպիսկոպոսլարըմը իշթիրաք իթ-տիյի կիպի, Գեր. Իսկէնտէրեան Անտոն, Աս-տուրեան Կղեմէս, Մէրճիմէքեան Պետրոս վէ ինչատուրեան Յովսէփ վարդապետլէր տէ հազըր պուլընմագտա խիլէր :

Սաաթ սէքիզէ հազընտը թափօր պիթտի վէ օրհնութիւն վէրիլէրէք էհայի տաղըլտը :
(Մապաւի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՒՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՇԽԱՐՀ. — Պիոս Ժ Սրբազան քահանայապետին մահաւընէն վերջը օգոստ. 20ին առաւօտը Վսեմ. Քամէրլինկ կարդինալ Տէլլա Վոյթէ ձեռք առաւ եկեղեցական իշխանութիւնը :

— Օգոստոս 22ին մեծ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ Հանգուցեալ Քահանայապետին թա-ղումը : Մարմինը դուռեցաւ երեւակ դադաղի մը մէջ և ըստ հանգուցեալին կամքին զետեղուեցաւ քահա-նայապետական առ ժամեայ գերեզմանատունը Ս. Պետ-րոս Մայր եկեղեցին ստորերկրեային մէջ :

— Նոր Քահանայապետի ընտրութեան համար Վսեմ. Կարդինալները Հռոմ կը հասնին տմէն կողմէ :

— Պապընտիր ժողովը տեղի պիտի ունենայ Օգոս-տոս 30ին :

— Իտալական կառավարութիւնը Քահանայա-պետական ընտրութեան նպատաւէր տմէն տեսակ միջոցներ ձեռք առաւ :

— Ճիօնալէ s'իթալիա թերթը կը գրէ. — Եթէ նոյն իսկ Իտալիա մասնակցէր կռիւին, մեր շահը կը հրամայէր՝ Եկեղեցին տմէն կողմէ ազատութիւնը ապահովել և բովանդակ աշխարհի ցուցնել որ՝ եւրո-պոսկան պատերազմը չի կրնար Սուրբ Ժողովը Պապի ընտրութեան համար նիստ գումարելէ արգելել :

— Թուիպուցա կը ծանուցանէ թէ Կարդինալ Այ-լիարտի Կարդինալներու Սուրբ Ժողովին առաջարկեր է պատերազմիկ պետութեանց՝ մասնաւորապէս Գեր-մանիյ և Աւստրիոյ առաջարկել որ Պապընտիր ժո-ղովին ամբողջ տեւողութեան միջոցին զինադադար մը կնքուի :

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ. — Օգոս-տոս 25ին Լատինացւոց Սէնթ-Էսրոպ Մայր եկեղեց-ւոյն մէջ հանգուցեալ Պիոս Ժ. Քահանայապետին համար կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօնին ներկայ գտնուեցաւ Ամենապատիւ Գերեթ-ջանիկ Հոգեւոր Տէրը, Պօղոս Պետրոս Ժ. Թերզեան, Կ. Պ. Տանն Կիլիկիոյ, ընկերակցութեամբ Արհի. Ար-հի. Յովսէփ Արքեպիսկոպոս Թոքոսեանի և Մատթէոս Եպիսկոպոս Սիպեանի :

— Օգոստոս 29ին, Ս. Աստուածածին աթոռա-նիստ եկեղեցւոյ մէջ պատարագ և հոգեհանգստեան պաշ-տօն տեղի ունեցան, Հանգուցեալ Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետին հոգւոյն համար :

Աւագ Թիմին միւս բոլոր եկեղեցիներուն մէջ ևս աղիււսոյ օրեր պատարագ և հոգեհանգիստ տեղի ու-նեցան և գալ շարաթ ալ տեղի պիտի ունենան Հան-գուցեալ Քահանայապետին համար :

— Ամեն. Գերեթջանիկ Հոգեւոր Տէրը Ողբացեալ Պիոս Ժ. Ս. Քահանայապետին մահուան լուրը Արհի. Արհի. Թեմական Եպիսկոպոսներուն և Գեր. Գեր. Կ. Պ. Փրիանորդներուն հաղորդելով պատուիրեց ամենուն որ Հանգուցելոյն հոգւոյն համար պատարագ և պաշ-տօն մատուցանեն :

✠ Վենետիկ Միթիմարեաններէն Հ. Յար. Աս-տուրեան և Վիեննայի Միթիմարեաններէն Հ. Հ. Գա-րեգին Գարանֆիլեան և Արսէն Ջնտոյեան ապօրինի ժողովին ծանօթ խնդրոյն մէջ Հոգեւոր իշխանութեան բացարձակ հնազանդութիւն յայտնեցին և մասնաւոր գրով նոյն ապօրինի ժողովին որ և է մասնակցութիւնը մերժած ըլլալով, իրենց վրայ դրուած կախակայու-թեան պատիժը վերցուեցաւ :

ԵՆԻՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԳՈՐԾԵՐ. — Պուք-րէշէն Օչոստ. 25 թիւով կը հեռագրեն. — Թուրքե-հէյլէն բանակցութիւնները, որոնց համար թալէաթ և խալիլ պէյերը հոն գացած են, տակաւին պաշտօնա պէս չսկսան : Վաղը կէսօրէն ետքը միայն կարծիքի փոխանակութիւն մը տեղի պիտի ունենայ երկու եր-կիւններու պատուիրակներուն միջեւ :

Խորհրդակցութիւնը պիտի կատարուի Պուքրէշի

մէջ և երբոր պարագաները ստիպեն՝ այն ատեն միայն պատուիրականները Սինայի աղբիւրի երթան բանակցութիւնները շարունակելու համար:

Պետրոս, 24, (Ժամը 3, 10) — Վ. Ե. Ֆ. «Գերման Ընդհ. Սպառնալիցը կը ծանուցանէ. — «Պալերիոյ զաւթառաւիգ իշխանին հրամայած զօրքը յաղթեց թշնամիին ի Լուէն և անցաւ Լիւնէվիլ — Պլամօն — Սիւրէյ գիծը:

«Գերման 24րդ զօրաբանակը այսօր մտաւ Լիւնէվիլ (Նանսիի գաւառին մէջ): Մեր զօրքերուն կողմէ թշնամիին հետապնդումը կը սկսի շատ արդիւնքներ ունենալ: Բաց ի բազմաթիւ գերիներէ ու գրօշներէ Վոսի գաւառին մէջ յառաջացող գերման բանակը ցարդ գրաւեց 130 թնդանօթ:

«Գերման Գաւառաւանդին բանակն այսօր շարունակեց կռիւը, և թշնամին հետապնդեց դէպ յառաջ Լուվիի ուղղութեամբ: Վիւրթէմպերկի Ալպրէթ դուքսին բանակը Նեօֆ Շաթոյի երկու կողմէն յառաջ երթալով կատարելապէս պարտութեան մատնեց ֆրանս. բանակ մը, որ յառաջացեր էր Սեմուա գետէն անդին (Պելլէ Լիւքսեմպուրկ): Մեր զօրքը այժմ էր հետապնդէ պարտուած այս ֆրանս. ոյժերը: Բազմաթիւ թնդանօթներ ու գրօշներ, խիստ մեծ թուով գերիներ. որոնց մէջ կան մէկ քանի զօրավար, մեր ձեռքն ինկան: Մեծօրի արեւմտակողմը մեր զօրքը կը յառաջանայ դէպ ի Մուլէօփ: Պարտութեան մատնուեցաւ անգլ. հեծելազօրաց կիսաբաժին մը, որ յառաջացեր էր դէպի մեր զօրաց ճակատը:

Պետ Բնդի. Սպայակոյցին
ՅՈՒՆ ՇԹԱՅՆ

Հռոմ, 25. — Գերմանները տիրեցին Նապիւռի:
Բարիզ, 25. — Ժամօնէն կը հեռագրուի թէ 30,000 Գերմաններ կը պաշարեն Անվէրսը, սպասելով Ժանը հրետանիին ժամանումին: Գերմանները յարձակեցան Մայինի վրայ:

Բարիզ, 25. — Պրիւսէլէն հասած տեղեկութիւններու նայելով գերման հետեւակազօրքը հասած է մինչեւ Ռուպէ: Ռուպէի և Լիլի միջեւ հեռագրական գիծերը քանդուած են: Այս երկու քաղաքները կղզիացուած են: Պելլէի քաղաքի մէջ երկաթուղիի լուր հաղորդակցութիւնները ընդհատուած են:

Լիլի մօտ հեռագրութիւն կատարող գերման ուսչւան պահակներու և ֆրանսացի պահակներու միջեւ ընդհարում մը տեղի ունեցաւ: Բազմաթիւ ուսչւաներ գերի բռնուեցան: Ֆրանսացիներուն կողմէ:

Բարիզ, 25. — Պատերազմական նախարարութիւնը կը ծանուցանէ թէ մի միայն երկու ֆրանսական զօրաբաժիններ խիստ ծանր կորուստներ կրեցին Լուէն տեղի ունեցող կռիւններուն մէջ:

Պետրից, 26. — Անգլ. հետեւակ զօրաբաժին մը և ձիաւոր գումարտակ մը Պելլէի մէջ պարտութեան ենթարկուեցան: Հետեւակազօրաց ընդհ. բանակատեղին գերի ինկաւ: Գերմանները Ռուպէն մտան որ կը գտնուի Լիլի հիւսիսային կողմը:

Պետրից, 26 (Օսմ. Լոյս). — Լուվիի տարւթիւնները ֆրանսացիներուն կատարի դիմադրութեանէն ետքը ինկաւ:

Ռուս ընդհ. հեղափոխութեան հետեւեալ զեկոյցը կը հաղորդէ.

«Օգոստոս 25ին ընդհ. հրամանատարին սպայակազմը կը հաղորդէ թէ լալն ճակատի վրայ կը շարունակուի ռուս զինուորներուն խուժումը դէպի Արեւելեան Երուսաղէմ և Կոնստանտնուպոլիս: Երեսնեց ինքնակազմը և Անկերպուրկը:

«Գերման 20րդ զօրաբանակը սուրինուոր բուռն կռիւէ մը յետոյ ետ մղուեցաւ ու անկարգ նահանջի մատնուեցաւ: Մեծաքանակ աւար առինք: Նոյնպէս կը յառաջանանք Աւստրիոյ մէջ, ուր թշնամին ետ մղեցինք ընդմէջ Դարնօրօյի և Չէրքօյի, գրաւելով զընդացիները, ռազմանիւթեր, կառքեր ու օգնականեր:

Ֆրանսական դաշինքը վերականգնուած է այսպէս.

Վարչապետ	Վիվիանի
Արտաքին գործերու նախարար	Տէլաուէ
Դատական	Պրիան
Ներքին գործոց	Մայլի
Պատերազմական	Միլլան
Երեսական	Ռիպո
Մովսէրին	Օկանեօր
Հանր. շինութեան	Սէմպա
Առեւտրական	Թոմսօն
Գաղթային	Տուսէրկ
Երկրագործական	Ֆելուան Տալլ.
Կրթական	Ֆելուան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հանգիստ Պիոսի Բահանայապետի ժաի	545
Հին վաւերացութիւն	549
Նորնեակ Բիւսնէի	552
Դիսական	553
Ֆարսաօնութիւնը	555
Լուսսա 25ինի պէնէլիլիլ Ս. Հաղորդութիւն գովարէսի	557
Տեղեկագրական	559

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՆ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵՆ

ՏՆՈՐԵՆ-ԽՄԱՆԴԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՂԵՂԱՆԵԱՆ

Տպարան Վ. Արժագանակ Եւրոպայեան, Բերա. Պայրամ փողոց քիւ 5, Կ Պոլս

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ՝ ՊԱՅՄԱՆՆԵՐ . — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40. դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 . — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արտասահ-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5 . — Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ . — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ.

Պոլիս:

GATOUGHUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու Լէ
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրատեղին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին ղրկել:

Տարր. Սկզբունք Գրկատ. Վարդապետութեան. գին 2 դհկն:

Տէր Կոմիտաս Քահանային վարըր. գին 5 դհկն:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործաց համար կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, զիրքեր, տեսքեր, հրաւիրագիրներ, բարդեր, քարդ-ատրէսներ,
մահազդներ, եւն. եւն. Գրիները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemysl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwickau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Palements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.